ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հոկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

138
(2988)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԶՊԵՏԸ «ԼԻՍԿԱՅԻ» ԲԱՐՔԵՐՆ Է ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ

Հետհեղափոխական Հայաստանում նոր «լիսկաներ» են հայտնվում: «Ես Գեղարքունիքի Նիկոլն եմ». այս խոսքերի ու անպատժելիության հեղինակը Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն է դիմել քաղաքացի Գուրգեն Հակոբյանը՝փորձելով բարձրաձայնել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի «բեսպրեդելը» մարզում, որի դեմ չեն կարողանում պայքարել անգամ իրավապահները:

Ըստ քաղաքացի Գուրգեն Հակոբյանի՝ ինքը «Կվարց Հոլդինգ» ՍՊԸ-ի տնօրենն է, եւ իր ղեկավարած ՍՊԸ-ն «Լուսակունք» ՍՊԸ-ից մետաղական խողովակներ է գնել: «Մետաղական խողովակները գտնվում են Վարդենիսի վարչական շրջանի Այրք համայնքի տարածքում: Հետագայում ցանկացել եմ խողովակները տեղափոխել այլ վայր ու դիմել եմ համայնքապետին (բոլոր դիմումներս կան), նաեւ մարզպետին, բայց թույլ չեն տալիս խողովակները տեղափոխեմ՝ու վերջ: Կան բոլոր փաստաթղթերը, որ խողովակները պատկանում են մեր ընկերությանը, սեփականության վկայականն էլ իմ ձեռքում է, սակայն մարզպետը թույլ չի տալիս՝խողովակները տեղաշարժեմ: Ասում է՝խողովակները համայնքինն են ու պետք է մնան համայնքում: Դիմել եմ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանին, նա էլ վախենում է թույլատրելուց, քանի որ Գեղարքունիքի մարզպետը ասում է, որ Գեղարքունիքի մարզի «թագավորն» ու «Նիկոլն» ինքն է, ոնց ուզում է՝պիտի այդպես լինի, ոչ ոք չի կարող իր ասածը չանել:

Խողովակների տեղափոխության ժամանակ ոստիկանությունը բռնել է մեզ, ու արդեն 4 ամիս է խողովակները ոստիկանության Վարդենիսի բաժնի մոտ են, ու ո՛չ դատում են ինձ, ո՛չ էլ թողնում են իմ խողովակները տանեմ, բոլոր փաստաթղթերը սեփականության վկայականները ներկայացրել եմ քննիչներին, կամ պետք է կարճեն կամ պետք է ինձ կալանավորեն. չեն անում ոչինչ»:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին՝պարզելու, թե ինչու է խոչընդոտում քաղաքացու սեփականության տեղաշարժին: Ի պատասխան՝Կարեն Սարգսյանը հայտնեց. «Մեկ բառով կարող եմ ասել՝ստախոսություն է: Եթե որեւէ մեկը փորձում է համայնքի վարչական տարածքում որեւէ աշխատանք իրականացնել, նկատի ունեմ՝ քանդման, վերակառուցման, պետք է դիմի համայնքապետարան ու ստանա համապատասխան թույլտվությունը եւ իրականացնի, երբ մարդը չի դիմում ու չունի թույլտվություն եւ իրականացնում է, համայանքապետարանի կողմից վարույթ է գործադրվում, ու այս ամենից հետո նա շարունակում է այդ գործողությունները, դիմում են ոստիկանություն, ու ոստիկանությունն է միջամտում տվյալ աշխատանքները կանխելուն: Հիմա այդպիսի իրավիճակ է ստեղծվել»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ՔՊ խմբակցությունում արդեն պատրաստվում են 2025 թվականի բյուջեի նախագծի քննարկմանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նոյեմբերի 12-ից մեկնարկող նստաշրջանին Նիկոլ Փաշինյանը գնալու է խորհրդարան, իսկ մինչ այդ հանձնաժողովների համատեղ նիստերում եկող տարվա բյուջեի նախագիծը կքննարկվի: Նշենք, որ սեպտեմբերին կառավարությունում խորհրդակցության ժամանակ արդեն իսկ ներկայացվել է 2025 թվականի պետական բյուջեի նախագիծը: ԱԺ-ում բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների եւ դրանց համատեղ նիստերում, որոնց, սահմանված կարգով, մասնակցում են նաեւ վարչապետի կողմից լիազորված անձինք: Այսինքն՝նախ Նիկոլ Փաշինյանն է հանձնաժողովում ներկայացնելու բյուջեի նախագիծը, այնուհետեւ՝նախարարները եւ ոլորտային մյուս պատասխանատուները: Հանձնաժողովի նիստերում քննարկվելուց հետո՝նախագիծը պետք է գա նաեւ ԱԺ լիագումար նիստերի օրակարգ արդեն նոյեմբերի կեսին:

Տարեսկզբին, երբ կրկին Կոմիտասի շուկայի վաճառականներին ստիպեցին լքել շուկայի տարածքը, մամուլը գրեց, որ սեփականաշնորհող ընկերությունը GTB Holdings ՍՊԸ-ն է: Իսկ ո՞վ է այդ արտոնյալ գործարարը: Շուկայի վաճառականները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրուցելիս պնդում էին, որ շենքի տարածքում բնակելի շենք է կառուցվելու, իսկ իրենք իրենց հանապազօրյա հացը չեն կարողանալու վաստակել: Այսինքն՝ շարքային բնակիչը տուժելու է, իսկ խոշոր գործարարի բիզնեսը՝զարգանալու: Իսկ ո՞վ է խոշոր գործարարը, որի կարիքներն ու բիզնես նկրտումները ՀՀ քաղաքացու շահերից բարձր են դասել Նիկոլ Փաշինյանի իշխանության ներկայացուցիչները: «Ժողովուրդ» օրաթերթը բաց աղբյուրներց պարզեց, որ GTB Holdings ՍՊԸ-ն հիմնադրվել է 12.07.2022 թվականին: Ընկերության գործունեությունը բազմապրոֆիլ է, ներառում է հետեւյալ կազմակերպությունները՝ «ԳՏԲ Անհաղթ» ՍՊԸ-ն, «Յունիոն սերվիս» ՍՊԸ-ն , «ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ-ն եւ «ՋԻ ԹԻ Բի Բիլդ» ՍՊԸ-ն: Ընկերությունները տարբեր շինարարական եւ կառուցապատման նախագծեր են ներկայացնում. Երեւանում այսպիսիք են, օրինակ, Դավիթ Անհաղթ 25 հասցեում կառուցվող նոր եւ ինքնատիպ բազմաբնակարան շենքն ու հայտնի Կոմիտասի շուկայի ետնամասում կառուցվելիք բազմապրոֆիլ ու բազմաբնակարան շենքը, ինչպես նաեւ կազմակերպությունների նախագծերից է Երասխի կրակոցներից փրկված-տեղափոխված ամրանների գործարանը: Իսկ ովքեր են GTB Holdings ՍՊԸ-ի սեփականատերերը. «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ այստեղ 50 տոկոս մասնակցություն ունի Նոնո Արմենի Սարգսյանը, նույնքան էլ՝ԱՄՆ քաղաքացի Բոբբի Սինգի Կանգը: Նոնո Սարգսյանը սպարապետ Վազգեն Սարգսյանի եղբոր՝Արմեն Սարգսյանի դուստրն է: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Նոնո Սարգսյանի հետ՝հասկանալու համար, թե ինչ ճակատագիր է սպասվում Կոմիտասի շուկայի աշխատակիցներին. սակայն չհաջողվեց, մեր հաղորդագրությունները մնացին անպատասխան: Հավելենք, որ Նոնո Սարգսյանի ամուսինը Գրիգոր Տեր-Ղազարյանն է՝խոշոր գործարար, որը անգամ դիվանագիտական անձնագրով ոչ վաղ անցյալում ազատ ելումուտ էր անում:

Հոկտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի 10-ամյակի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի կողմից Կոմիտեի կոլեգիայի, ղեկավարության անդամները, ինչպես նաեւ մի շարք հայեցողական եւ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք պարգեւատրվել են «ՀՀ քննչական կոմիտեի 10-ամյակ» հոբելյանական մեդալով: Նման պարգեւների են արժանացել նաեւ համակարգի գործող եւ նախկին այլ աշխատակիցներ: «Ժողովուրդ» օրաթերթը արձանագրեց, որ մեդալով պարգեւատրվածներից մեկը Նիկոլ Փաշինյանի, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի, ԱԱԾ նախկին տնօրենի գաղտնալսման գործը քննող քննիչ, ներկայումս ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության պետ Կամո Սահակյանն է: Այո՛, նա նույն քննիչն է, որի հետ դեռեւս 2020 թվականին Նիկոլ Փաշինյանը հարցաքննության սենյակում սելֆի արեց ու այն հրապարակեց՝նշելով. «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի գործող ղեկավարը քննչական կոմիտեի հրավերով ներկայացել է ու պատասխանում է նրա հարցերին»: Դե իսկ հիմա Փաշինյանին չեն էլ հրավիրում. նրան առնչվող գործերը ուղղակի անտեսվում են:

ԶՐՈՒՅՑ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԻԱՅՆ ԱԹՈՌԻՆ ՄՆԱԼ Է ՈՒԶՈՒՄ», ԵՍԱՅԱՆ

Երեկ ՀՀ դատախազության առաջ «Սրբազան պայքար»-ը ակցիայի էր հրավիրել իր աջակիցներին, քանի որ ՀՀ գլխավոր դատախազին պետք է փոխանցվեին նամակներ հանցագործության վերաբերյալ:

«Ժողովուրդ» օրաթերթը դատախազության շենքի դիմաց զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Մարգարիտ Եսայանի հետ՝ կատարվելիք իրադարձությունների վերաբերյալ:

-Տիկին Եսայան, այսօր Սրբազանի հայտարարության համաձայն՝ պահանջ է հնչում քրեական գործեր հարուցել Նիկոլ Փաշինյանի դեմ: Ի՞նչ եք կարծում, արդյոք Նիկոլ Փաշինյանի դեմ քրեական գործ հարուցելու դեպքում որեւէ բան կփոխվի՞:

-Նիկոլ Փաշինյանի դեմ քրեական գործեր ո՞վ պիտի հարուցի: Այսօր դատահիրավական ողջ համակարգն ու արդարադատությունը ենթարկվում է մեկ անձի եւ այդ անձը երկիրը թշնամուն հանձնող Նիկոլ Փաշինյանն է: Ես բացարձակ լավատես չեմ, ոչ էլ այնքան միամիտ, որ մտածեմ, թե այսօր Նիկոլ Փաշինյանի համար «վնգստացող» դատավորները կամ դատական համակարգը կարող են քրեական գործ հարուցել Նիկոլ Փաշինյանի դեմ: Դա վստահաբար կլինի, սակայն իշխանափոխությունից հետո, եւ իշխանափոխությունից հետո մի քանի տասնյակ հոդվածներով Նիկոլ Փաշինյանը պետք է կանգնի արդարադատության առջեւ:

-Առհասարակ այսօրվա հավաքից ի՞նչ սպասելիքներ ունեք:

-Այսօրվա, եւ առհասարակ բոլոր հավաքները մի բանի մասին են. Հայաստանի Հանրապետությունում կա հասարակության մի ստվար զանգված, որը չի համակերպվում դավաճան իշխանությունների վարած քաղաքականությանը, չի համակերպվում երկիրը թշնամուն հանձնելու այս խայտառակ բեմականացմանը, չի համակերպվում նրան, որ մեր բոլոր զոհերը եղել են հանուն ոչնչի, որը չի համակերպվում Արցախի կորստի եւ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության՝ Բաքվի բանտերում գտնվելու հետ, որը չի համակերպվում Նիկոլ Փաշինյանի ստրկամիտ, պարտվողական եւ դավաճան քաղաքականությանը եւ հասարակության ստվար զանգված ուզում է պայքարել, որ երկրում իշխանափոխություն լինի եւ վերոնշյալ արդարադատությունը պահանջներ ներկայացնի Նիկոլ Փաշինյանի եւ նրա թիմակիցների նկատմամբ: Այսօր մենք գտնվում ենք ոչ թե վատ իրավիճակում, այլ ողբերգության մեջ: Համայն հայությունը, թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում, թե՛ բռնի տեղահանված արցախահայությունը ողբերգության մեջ են: Այս ամենի պատասխանատուն միայն ու միայն Նիկոլ Փաշինյանն է:

Այս եւ նախկին բոլոր հավաքները մեկ նպատակ ունեն՝ իշխանությունից հեռացնել Նիկոլ Փաշինյանին եւ Հայաստանի Հանրապետությունում վերականգնել սահմանադրական կարգը, որպեսզի Նիկոլ Փաշինյանի նման դավաճանը չհամարձակվի ասել, որ Անկախության հռչակագիրը կարող է լինել ոչինչ, Նիկոլ Փաշինյանի համար «վնգստացող» Սահմանադրական դատարանը հայտարարի, որ սահմանազատման այդ խայտառակ թուղթը կարող է հանկարծ ավելի բարձր լինել, քան Անկախության հռչակագիրը:

Այսօր (խմբ.) հայտարարել է, որ եթե մեր Սահմանադրությունը խանգարի խաղաղության պայմանագրին, ապա պատրաստ է փոխել այն: Դուք հասկանո՞ւմ եք՝ դա ինչ է նշանակում: Նա հստակ ասում է. «Ես թուրք եմ եւ անելու եմ այն ամենն ինչը հաճո է թուրքին»:

Այդ մարդը բացահայտ ասում է, որ երկիրը տալիս է թուրքին եւ ո՛չ հռչակագիրը, ո՛չ Սահմանադրությունը արժեք չունեն՝ միայն թե մնա այդ աթոռին: Նա Ալիեւին եւ Էրդողանին հստակ հասկացնում է, որ կանի ամեն բան, միայն թե մնա աթոռին, ճանապարհորդի, լինի իշխանության ղեկին:

Նիկոլ Փաշինյանն այսօր ոչինչ է արտաքին քաղաքականության մեջ, թե՛ գլոբալ արտաքին քաղաքականության, թե՛ Ալիեւ-Նիկոլ, Էրդողան-Նիկոլ, Ալիեւ-Նիկոլ-Էրդողան քաղաքական հարաբերություններում: Նա այստեղ զրո է, եւ անելու է ու անում է այն ամենն ինչ իրեն ասվում է:

Նա հստակ նշում է, որ ոչինչ դարձած բանակով մեկ ամսում կավարտի ամեն բան, ոչ ոք չի կռվի իրենց դեմ եւ կգնա արտահերթ ընտրությունների, իսկ Ալիեւը դրան զուգահեռ պնդեց, որ ոտքով հասնելու է Հայաստան: Հետեւաբար, հիմա Նիկոլն ինչ էլ ասի՝ զրո է:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ԿՍՏՈՐԱԳՐՎԻ՞ ԱՅՍ ԱՄԻՍ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայկական կողմը պատրաստ է արդեն այս ամիս ստորագրել Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագիրը, եւ սա Երեւանի պաշտոնական դիրքորոշումն է: ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի նեղ կազմով նիստի ժամանակ երեկ Փաշինյանը կրկնել է, որ համաձայնագրի կետերի մեծ մասն արդեն համաձայնեցված է երկու երկրների միջեւ, եւ Հայաստանն առաջարկում է ստորագրել փաստաթուղթ՝ համաձայնեցված կետերով, այնուհետեւ շարունակել բանակցություններն ու քննարկումները:

Ադրբեջանական կողմը, չնայած միջազգային հանրության աչքին խաղաղասեր երեւալու համար տարբեր կեղծ հայտարարություններ է անում, բայց իր քայլերով, հստակ, ամենեւին մտադիր չէ խաղաղության պայմանագիր ստորագրել:

Ադրբեջանի բռնապետ նախագահ Ալիեւը ամեն անգամ մի նոր նախապայման է դնում Հայաստանի առջեւ՝ անհնարին դարձնելով խաղաղության պայմանագրի ստորագրումը:

Մոսկվա կատարած իր այցի ընթացքում Նիկոլ Փաշինյանը փակ հանդիպում է ունեցել նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Հայաստանի վարչապետի Ռուսաստանի նախագահ համաձայնություն են ձեռք բերել, որ 2025 թվականի հունվարի 1-ից Հայաստան-Իրան եւ Հայաստան-Թուրքիա պետական սահմանի պահպանությանը կմասնակցեն նաեւ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը, իսկ Հայաստան-Իրան պետական սահմանի հսկիչ-սահմանային կետում ծառայությունն ամբողջությամբ կիրականացվի ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ուժերով:

Փաստորեն, Լավրովի եւ Արարատ Միրզոյանի հանդիպման օրակարգն այնքան սնանկ է եղել, որ այլ հարց չեն ունեցել քննարկելու, դրա համար անցել են կվադրոբերներին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԳՆԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 30 ՏՈԿՈՍ

2019 թվականի սեպտեմբերի 16-ին Վանաձորում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Այսօր ժողովուրդը կառավարության նկատմամբ ունի այնպիսի վստահություն, որ առաջիկա 5 տարին ռիսկեր չեն լինելու, իսկ դա օգնում է, որ գնաճը մնա ցածր մակարդակում: Գնաճի խնդիրը ոչ միայն հիմա է լուծված, այլեւ 5 տարվա կտրվածքով գնաճի խնդիր չկա»: Սակայն իրականում Փաշինյանը նորից խաբեց. համաձայն վիճակագրության, Հայաստանում Նիկոլ Փաշինյանի կառավարման 5 տարիների ընթացքում գնաճը արդեն իսկ կազմել է շուրջ 30 տոկոս, ինչը աննախադեպ է:

ԼԱՎՐՈՎԸ ԾԱՂՐԵԼ Է ՀԱՅԵՐԻՆ

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հայ գործընկեր Արարատ Միրզոյանի հետ քննարկել է կվադրոբերների հարցը՝ Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի ղեկավարների միջեւ Կրեմլում բանակցություններին սպասելիս:

«Դուք կվադրոբերներ ունե՞ք»,- հարցրել է Լավրովը իր հայ գործընկերոջը: Հավելել է. «Երեխաները շուն են ձեւանում: Սա ամենակարեւոր լուրերից է: Կենդանիների նման են քայլում»,- պարզաբանել է ՌԴ ԱԳՆ ղեկավարը:

Միրզոյանը հաստատել է, որ գիտի կվադրոբերների շարժման մասին՝ այն անվանելով նորույթ:

Իր հերթին զրույցին ներկա ՌԴ-ում Հայաստանի դեսպան Գուրգեն Արսենյանն ասել է, որ Եվրոպայում կվադրոբերներն արդեն իրենց բնորոշում են որպես «գենդեր»:

«Կվադրոբերները» նոր երիտասարդական շարժում է, որի ներկայացուցիչները տեղաշարժվում են չորս ոտքի վրա եւ ընդօրինակում կենդանիների շարժումները:

Հայկական կողմի համար գուցե սա նորմալ է, սակայն սա որպես ծաղրանք կարելի է դիտարկել: Այսինքն՝ 2 երկրների արտաքին գործերի նախարարներ քաղաքական կամ գործընկերային որեւէ թեմա չունեն խոսելու՝ խոսում են կվադրոբերներից, նոր գենդերից, բայց ոչ քաղաքական թեմայից:

ԲԱՔՎՈՒՄ ՆԱՏՕ-ԻՆ ԴԺԳՈՀԵԼ ԵՆ

Ադրբեջանը ՆԱՏՕ-ի ներկայացուցիչներին դժգոհել է Հայաստանում ԵՄ առաքելությունից, որը տեղակայված է հայ-ադրբեջանական սահմանին Հայաստանի կողմից: Այս մասին հայտնում է APA գործակալությունը:

«ԵՄ առաքելության տեղակայումը Հայաստանի տարածքում պայմանական սահմանին սրում է իրավիճակը»,- ասել է պաշտպանության փոխնախարար-ադրբեջանական բանակի գլխավոր շտաբի պետ Քերիմ Վելիեւը այցով Ադրբեջանում գտնվող ՆԱՏՕ Միջազգային ռազմական շտաբի գլխավոր տնօրեն, գեներալ-լեյտենանտ Յանուշ Ադամչակի հետ հանդիպման ժամանակ:

«Գլխավոր շտաբի պետը հատկապես ընդծել է, որ Եվրամիության դիտորդական առաքելության տեղակայումը Հայաստանի տարածքում պայմանական սահմանին, ինչպես նաեւ Հայաստանի զինումը որոշ երկրների կողմից, որոնք գտնվում են տարածաշրջանի սահմաններից դուրս, մասնավորապես, Ֆրանսիայի կողմից, հանգեցրել են Հայաստանում ռեւանշիստական ուժերի ակտիվացման, խոչընդոտներ առաջացրել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման ճանապարհին եւ խոչընդոտում են խաղաղության գործընթացին՝ սրելով իրավիճակը Հարավային Կովկասում»,- մեջբերել է ԶԼՄ-ն:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՆ ԻՐԱՆԻՆ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի եւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի միջեւ այսօր հեռախոսազրույց է սպասվում: Այս մասին հայտնում է Times of Israel-ը՝ հղում անելով սեփական աղբյուրներին:

Սպասվում է, որ հեռախոսազրույցի ընթացքում կքննարկվի Իրանին հարվածելու ծրագրերը:

Հիշեցնենք, որ օրերս Բայդենը հայտնել է, որ Իսրայելը դեռ չի որոշել, թե ինչպես պատասխանի Իրանի կողմից իր ուղղությամբ 180 բալիստիկ հրթիռների գիշերային արձակմանը, որի հետեւանքով վնասել են իսրայելական որոշ ավիաբազաներ:

Մինչդեռ Իրանը պաշտոնապես հայտարարել է, որ հարձակումը շարունակելու մտադրություն չունի՝ Իսրայելին նախազգուշացնելով, որ որեւէ պատասխան քայլ կստանա շատ կոշտ արձագանք:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀՐԱԴԱԴԱՐ

Իրավիճակը Լիբանանում օրեցօր վատթարանում է՝ Եվրախորհրդարանում հայտարարել է Եվրամիության արտաքին գործերի ղեկավար Ժոզեպ Բորելը՝ հավելելով, որ պետք է հասնել հրադադարի:

Իր ելույթում Բորելը հայտարարել է, որ Լիբանանի բնակչության ավելի քան 20%-ը ստիպված է եղել տեղափոխվել բնակության վայրից:

«Ռմբակոծություններն ազդել են Սիրիայի հետ հաղորդակցության վրա, սիրիացի միգրանտները փորձում են վերադառնալ Սիրիա՝ փրկվելու Լիբանանում ստեղծված իրավիճակից: Դա մեզ համար իհարկե հետեւանքներ կունենա»,- հայտարարել է եվրոպացի դիվանագետը՝հավելելով, որ այս պահին կարեւոր է հնարավորինս արագ դիվանագիտական միջոցներով հրադադարի հասնելը:

ԿՐԵՄԼԸ ՀԵՐՔԵԼ Է

ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովը իրականությանը սուտ է որակել այն տեղեկատվությունը, որ Վլադիմիր Պուտինը 2021 թվականին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կառավարման ժամկետի ավարտից հետո յոթ անգամ հեռախոսով խոսել է նրա հետ:

Ավելի վաղ այս տեղեկությունը տարածվել էր ամերիկացի լրագրող Բոբ Վուդվորդի «Պատերազմ» գրքից:

«Սա տիպիկ կեղծ պատմություն է քաղաքական նախընտրական արշավի համատեքստում», - ասել է Պեսկովը The New York Times-ին:

Բոբ Վուդվորդը The Washington Post-ի խմբագիր էր: Նա նաեւ աշխատել է «Ուոթերգեյթ»-ի սկանդալի հետաքննության վրա, որը հանգեցրել էր ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնի հրաժարականին: Վուդվորդի «Պատերազմ» նոր գիրքը լույս կտեսնի հոկտեմբերին, սակայն որոշ ամերիկացի լրագրողներն արդեն տեսել են այն:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«ԱԶԱՏ» ԲՆԱԿԱՎԱՅՐՆ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԹԻՐԱԽՈՒՄ Է

ՀՀ ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Կրկին գրություններ եմ ուղարկել իմ միջազգային գործընկերներին եւ մի շարք կազմակերպությունների՝ այս անգամ մեր հայրենիքի մի մասի նկատմամբ Իլհամ Ալիեւի տարածքային նկրտումների վրա ուշադրություն հրավիրելու համար:

Սեպտեմբերի 30-ին Բաքվում հանդիսավոր կերպով բացվել է ծագումով ադրբեջանցի ժողովրդական հեքիաթագիր, աշուղ Ալասկերի արձանը, որի բացման արարողության ելույթի ժամանակ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ աշուղն ապրել է Ադրբեջանի հնագույն հողում՝ Գոյչա շրջանի Աղքիլիսա գյուղում: Ադրբեջանի նախագահը հավաստիացրել է իր ժողովրդին, որ իրենք վերադառնալու են իրենց «պատմական հողերը»:

(հղում՝ https://oxu.az/.../ilham-eliyev-baki-da-asiq-elesgerin...):

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Ալիեւի մատնանշած «հնագույն հողը» ՀՀ սուվերեն տարածքի մի մասն է՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայքնի Ազատ գյուղը:

(հղում՝ https://arar.sci.am/dlibra/docmetadata?showContent=true...):

Տասնյակ տարիներ առաջ, երբ Ազատում բնակություն էին հաստատել ադրբեջանցիներ, բնակավայրը կոչվել է Աղքիլիսա: Բայց եթե պատմական հետդարձ կատարենք, կհավաստիանանք, որ Ազատ գյուղն ի սկզբանե եղել է հայկական: Դրա մասին են վկայում գյուղում գտնվող գերեզմանաքարերը, խաչքարերը, եկեղեցին եւ մնացած հուշարձանները. ահա այստեղ ամբողջ տեղեկությունը վերոնշյալների վերաբերյալ:

(հղում՝ https://arar.sci.am/dlibra/docmetadata?showContent=true...):

Նույն պարագայում բազմաթիվ հայեր ծնվել են Ադրբեջանում, սակայն երբեք չեն արվել հայտարարություններ, որ նրանք վերադառնալու են իրենց ծննդավայր՝ Գանձակ (Կիրովաբադ), Դաշքեսան եւ այլուր: Ի դեպ, Դաշքեսանում, որպես ադրբեջանական բնակավայր, միակ պատմամշակութային կոթողն առ այսօր հայկական Թարգմանչաց եկեղեցին է:

Ադրբեջանի նախագահի արված հայտարարությունները «պատմական հողեր» վերադարձի վերաբերյալ ուղղակիորեն խախտում են միջազգային իրավունքի մի շարք դրույթներ:

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն՝ յուրաքանչյուր պետություն ունի իր տարածքի նկատմամբ ինքնիշխանության իրավունք:

Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ICCPR, 1966) վերահաստատում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որը պետք է հավասարակշռված լինի գոյություն ունեցող պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի հետ:

Կոչ եմ արել միջազգային հանրությանը աջակցել Հայաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության պահպանմանը՝ կանխելով ադրբեջանական հնարավոր ագրեսիան»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻ ՄՈՏ ԱԿՑԻԱՆԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հոկտեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՀ ԱԳՆ շենքի, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիական Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատների առաջ ակցիաներ են իրականանալու եւ նամակներ են փոխանցվելու՝ Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների եւ պատանդների անհապաղ ազատ արձակման պահանջով:

Նշենք, որ 2024 թվականի նոյեմբեր ամսին Ադրբեջանում կայանալիք ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովին (COP29) ընդառաջ աշխարհի տարբեր երկրներում նույնպես մեկնարկել են ակցիաներ՝ Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների եւ պատանդների անհապաղ ազատ արձակման պահանջով:

Հավելենք, որ վերը նշված նախաձեռնությանը միացել են ԱՀ մարդու իրավունքների պաշտոնաթող պաշտպաններ Յուրի Հայրապետյանը, Ռուբեն Մելիքյանը, Արտակ Բեգլարյանը, ինչպես նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտոնաթող պաշտպաններ Արման Թաթոյանը եւ Լարիսա Ալավերդյանը:

Հիշեցնենք, որ COP29-ին մասնակցելու հետ կապված ՀՀ-ն առայժմ ոչ մի հստակ պատասխան չունի:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՇԱՀԵՐԸ ՀԱԲՆԿՆՈՒՄ ԵՆ

Այսօր Նիկոլ Փաշինյանի անձնական շահը համապատասխանում է Ադրբեջանի պետական շահի հետ:

Այս մասին Դատախազության առջեւ ընթացող հավաքի ժամանակ հայտարարել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

«Եվ Նիկոլ Փաշինյանը եւ իր կառուցողական գործընկեր Ալիեւը շահագրգռված են, որ աշխարհը չճանաչի Ադրբեջանի հանցագործությունները՝որպես էթնիկ զտում եւ որպես ցեղասպանություն:

Եվ ահա դա է պատճառը, թե ինչու ենք մենք ասում, որ Նիկոլ Փաշինյանը պետք է հեռացվի, որովհետեւ ինքը վտանգ է մեր պետության համար, որովհետեւ իր շահերը եւ մեր ազգային շահերը իրարից տարամիտում են: Նիկոլ Փաշինյանը մեր պետականության հակառակորդն է»,- հայտարարեց Արթուր Խաչատրյանը:

Վերջում Խաչատրյանն ավելացրեց, որ Նիկոլ Փաշինյանի հեռացումը բխում է Հայոց պետականության եւ ի սփյուռս աշխարհի հայության շահերից. ուստի Փաշինյանը պետք է հեռանա եւ իր դեմ պետք է քրեական վարույթ նախաձեռնվի:

Դատախազության առջեւ ընթացող հավաքի ժամանակ նույն մտահոգություններով հայտարարությամբ է հանդես եկել նաեւ Բագրատ Սրբազանը:

«Մենք պահանջում ենք Նիկոլ Փաշինյանի դեմ քրեական գործ հարուցել ցեղասպանության, էթնիկ զտման հանցակցության համար»:

«Պետք է գործընթաց սկսել Արցախի Հանրապետության բնակչության նկատմամբ ցեղասպան Ադրբեջանի ղեկավարի եւ նրան հանցակիցը եղած ՀՀ վարչապետի հանդեպ:

Այսօր 2 գործ ունենք հանձնելու դատախազությանը՝ միեւնույն ժամանակ հասկանալով, որ մեր երկրում որեւէ ինստիտուտ չի ծառայում պետությանը, այլ ծառայում է քաղաքական իշխանությանը, այլապես մինչեւ այսօր հանցագործությունների շղթան գնահատական կստանար նաեւ իրավական դաշտում:

Երկրորդ պահանջն է՝ քրեական գործ հարուցել Սահմանադրական դատարանի որոշման հետ կապված, համաձայն որի՝ ՀՀ Սահմանադրության անկախության հռչակագրի դրույթները ճանաչվեցին ոչ իրավական», - ասաց նա:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

ԻՆՉ Է ՎԿԱՅՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2023 թվականին գրանցված հանցագործությունների քանակին ըստ հանցատեսակների՝ ՀՀ մարզերում եւ մայրաքաղաքում:

Մայրաքաղաք Երեւանում գրանցվել է 608 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 300 դեպք, որից 80-ը՝ ծանր, սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը 56 դեպք-ն են եղել:

Արագածոտնի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 21 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 43 դեպք, որից 12-ը՝ ծանր:

Արարատի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 60 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 98 դեպք:

Արմավիրի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 19 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 130 դեպք, որից 32-ը ծանր, սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների 26 դեպք:

2023 թվականի Գեղարքունիքի մարզում տեղի է ունեցել սպանության 76 դեպք, դիտավորությամբ առողջությանը վնաս հասցնելու 56 դեպք, որից 14-ը ծանր:

2023 թվականին հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների թիվը, այդ թվում՝ հրազեն, ռազմամթերք պատրաստելը եւ ապօրինի շրջանառության դեպքերը մայրաքաղաքում կազմել են 304, Արագածոտնի մարզում՝ 69, Արարատի մարզում՝ 62, Արմավիրի մարզում՝ 100, Գեղարքունիքի մարզում՝ 104 դեպք:

Մայրաքաղաքում նույն թվականին գրանցվել է ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 873 դեպք, որից 43-ը մահվան ելքով, խուլիգանության 315 դեպք, որից 61-ը կատարվել է զենքի գործադրմամբ:

Թմրամիջոցների հետ կապված 2986 դեպք 2023 թվականին տեղի է ունեցել մայրաքաղաքում, որից 2942-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, իսկ դրանից 1893-ը՝ իրացնելու նպատակով:

Արագածոտնի մարզում 2023 թվականին հրազեն, ռազմամթերք պատրաստելու եւ ապօրինի շրջանառելու 69 դեպք է գրանցվել: Արագածոտնի մարզում ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 88 դեպք է գրանցվել, որից 10-ը՝ մահվան ելքով: Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների 169 դեպք է տեղի ունեցել, որից 158-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ, իսկ դրանից 92-ը՝ իրացնելու նպատակով:

2023 թվականին Արմավիրի մարզում տեղի է ունեցել հրազեն, ռազմամթերք պատրաստելու եւ ապօրինի շրջանառելու 100 դեպք, ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու՝ 221 դեպք, որից 16-ը՝ մահվան ելքով: Նույն թվականին Արմավիրի մարզում տեղի է ունեցել խուլիգանության 43 դեպք, որից 15-ը՝ զենքի գործադրմամբ: Թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ տեղի են ունեցել 678 դեպքով, որից 585-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառություն է, իսկ դրանցից 48-ը՝ իրացնելու նպատակով:

Գեղարքունիքի մարզում 2023 թվականին հրազեն, ռազմամթերք պատրաստելու եւ ապօրինի շրջանառության 104 դեպք է գրանցվել, ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտման՝ 107 դեպք, որից 17-ը՝ մահվան ելքով:

Թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ եղել են 87 անգամ, որից 82-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառություն է, իսկ դրանցից 44-ը՝ իրացնելու նպատակով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿԵԼ Է ՄՈՐԱՔՐՈՋ ՈՐԴՈՒՆ

Հոկտեմբերի 8-ին Զորաղբյուր գյուղի Անկախության փողոցի տներից մեկում սպանություն է տեղի ունեցել:

ArmLur.am-ին հասած տեղեկություններին համաձայն՝ ժամը 19:35-ին մայրը հայտնաբերել է որդու՝ Ա. Ն.-ի դիակը, որի գլուխը եւ ձեռքերը արյան մեջ են եղել:

Դեպքի վայր շտապած իրավապահները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 15:00-ին, նշված տան ննջասենյակում Գ. Հ.-ն մուրճով մի քանի անգամ հարվածել է Ա. Ն.-ի գլխին, ով տեղում մահացել է, հափշտակել է պարանոցի ոսկյա շղթան եւ դիմել փախուստի:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Գ. Հ.-ն ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության բաժին, իսկ հանցագործության գործիք հանդիսացող մուրճը հայտնաբերվել է տան նկուղում:

Պարզվել է՝ Գ. Հ.-ն մուրճով սպանել է հարազատ մորաքրոջ որդուն, հափշտակել է ոսկյա շղթան եւ վաճառել, իսկ գումարի մի մասով կատարել է գնումներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ, ԿՈՂՊՈՒՏԻ ԴԵՊՔԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2023 թվականին սեփականության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր քանակի մասին ՀՀ մարզերում եւ Երեւանում՝ ըստ տեսակների:

Այսպիսով, 2023 թվականին սեփականության դեմ ուղղված հանցագործությունները մայրաքաղաքում եղել են 6982 անգամ, այդ թվում՝ 6204 գույքի հափշտակություն, որից 45-ը ավազակություն, 101-ը կողոպուտ, 4436-ը գողություն, դրանից 367-ը՝ բնակարանային: Խարդախության դեպք գրանցվել է 1444 անգամ, յուրացման կամ վատնման դեպք գրանցվել է 178 անգամ: Ուրիշի գույքի ապօրինաբար օգտագործման 5 դեպք է գրանցվել, իսկ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ գրանվել են 773 անգամ:

Արմավիրի մարզում 2023 թվականին գրանցվել է գույքի հափշտակման 567 դեպք, որից 8-ը՝ ավազակություն, 12-ը՝ կողոպուտ, 347-ը՝ գողություն, դրանցից 43-ը՝ բնակարանային: Խարդախության դեպքերն Արմավիրի մարզում կազմել են 162, իսկ յուրացման կամ վատնումի՝ 38 դեպք: Սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ եղել են 129 անգամ:

Գեղարքունիքի մարզում 2023 թվականին գրանցվել է գույքի հափշտակությունների 226 դեպք, որից 4-ը՝ ավազակություն, 4-ը՝ կողոպուտ, 132-ը՝ գողություն, դրանից էլ 45-ը՝ բնակարանային: Խարդախության դեպքեր գրանցվել են 65 անգամ, իսկ յուրացման կամ վատնման դեպք՝ 21 անգամ: Սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ Գեղարքունիքի մարզում տեղի են ունեցել 47 անգամ:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄՆԵՐ

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 30-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ արդարադատության նախկին նախարար Դավիթ Հարությունյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

12 անշարժ գույք,
3 շարժական գույք,
723 միլիոն դրամ:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ ԵՆ ՄԵԴԱԼՈՎ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կազմավորման 10-ամյա հոբելյանի եւ քննչական կոմիտեի ծառայողի օրվա առթիվ քննչական կոմիտեի նախագահ Ա. Քյարամյանի հրամանով քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանը պարգեւատրվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 10-ամյակ» հոբելյանական մեդալով քննչական կոմիտեի հետ սերտ եւ արդյունավետ համագործակցության համար:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ արդարադատության նախկին նախարար Գրիգոր Մինասյանից հետո պաշտոնանկ կարվի Քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանը:

ԻՆՉ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ «ԴՈՄՈՒՍ»-Ի ՏԵՐԵՐԸ

ՔԿ խոսնակ Գոռ Աբրահամյանը սոցցանցի իր էջում հայտնում է. «Հոկտեմբերի 7-ին՝ ուշ երեկոյան, ՀՀ քննչական կոմիտեն Ոստիկանությունից ստացել է «Դոմուս» ՓԲԸ-ի հաղորդումը Իսակովի պողոտայի 29/1 հասցեում գտնվող ընկերության պահեստային մասից հրդեհի բռնկման եւ խանութի արվելու մասին, ինչով, ըստ հաղորդման, նախնական տվյալներով ընկերությանը շուրջ 800մլն դրամի գույքային վնաս է պատճառվել:

Հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

Կատարվում է նախաքննություն՝ հրդեհի առաջացման պատճառները, պատճառված գույքային վնասի իրական չափերը, ինչպես նաեւ հակահրդեհային անվտանգության պահանջների պահպանվածության հանգամանքները պարզելու ուղղությամբ»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 8-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 107 դեպք՝ որից 2-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱՅՏ՝ ՄԻԱՅՆ ՆՊԱՍՏԱՌՈՒ 2500 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզի սահմանամերձ, անտառաշատ բնակավայրերի բնակիչներին ամեն տարի աշնանը անտառում 8 խորանարդ մետր վառելափայտի թափուկ պատրաստելու, տնօրինելու թույլտվություն էր տրվում: Այս աշնանը վառելափայտի թափուկ նախատեսվել է ընտանեկան նպաստառու ընտանիքների համար: Այս հարցով տեղեկատվական հարցում ենք ուղարկել Հայանտառ ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Սեւակ Մարկոսյանին: Նրա պատասխանում նշված է. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից անտառամերձ բնակավայրերի բնակչությանն անվճար թափուկ վառելափայտի օգտագործման տոմսեր տրամադրելու ժամկետ է սահմանվել սույն թվականի սեպտեմբերի 9-ից նոյեմբերի 29-ը: Տրամադրվող թափուկ վառելափայտի չափաքանակները հաշվարկված եւ սահմանված են՝ համաձայն «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կառավարման պլանների՝ տարվա ընթացքում գոյացող թափուկ վառելափայտի ծավալներին համապատասխան: «Անտառտնտեսություն» մասնաճյուղերին հանձնարարվել է տրամադրման ընթացքում առաջնահերթությունը տալ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, ընտանեկան եւ սոցիալական նպաստ ստացող անձանց: Թափուկ վառելափայտի ծավալների եւ շահառուների քանակի վերաբերյալ տեղեկատվություն կարող ենք տրամադրել գործընթացի ավարտից հետո»: «Հայանտառից» տրամադրել են նաեւ անվճար թափուկ վառելափայտի բացթողնման չափաքանակները՝ համաձայն «Անտառտնտեսություն» Մասնաճյուղերի անտառկառավարման պլանների՝ Արծվաբերդի անտառտնտեսություն՝7 000 խմ, Նոյեմբերյանի անտառտնտեսություն՝ 5000 խմ, Սեւքարի անտառտնտեսություն՝ 4000 խմ, Իջեւանի անտառտնտեսություն՝ 3000խմ, ընդհանուր՝19000 խմ: Այդ 19 հազար խմ-ն 2500 ընտանիքների համար նախատեսված, 8 խմ ծավալով թափուկ վառելափայտի ընդհանուր ծավալն է: Նոյեմբերի 29-ից հետո պարզ կդառնա, թե այդ 19 հազար խորանարդ մետրից որքանն է տրվել նպաստառու ընտանիքներին: Թափուկ վառելափայտը միայն նպաստառու ընտանիքներին տրամադրելը հանգեցնելու է ձմռան շեմին Տավուշում վառելափայտի թանկացմանը:

ՆՈՐ ԹՈՒՆԵԼ ԿԿԱՌՈՒՑՎԻ՞

Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելի նորոգումը պետք է այս տարեսկզբից սկսված լիներ, սակայն չի սկսվել: Կառավարությանը մերձ աղբյուրը հայտնեց՝ հաշվարկները ցույց են տվել, որ թունելի վերանորոգման ծախսերը համարժեք են նոր թունելի կառուցման ծախսերին: Ուստի որոշվել է գործող թունելի կողքին կառուցել նոր թունել,գործող թունելն էլ թողնել որպես պահեստային: Նիկոլ Փաշինյանի իշխանությունն անցած վեցուկես տարում մեծածավալ որեւէ օբյեկտ չի կառուցել. ուստի նոր թունելի գործարկումը կասկածելի է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ԱՆԴՐՈՒԴԻ» ՀԱՄԱՐ ՎՆԱՍԱԲԵՐ ԳՐՈՀՆԵՐ ԵՆ ԿԱՆԽՎԵԼ

«Կասպերսկի» ընկերությունը 2024-ի երկրորդ եռամսյակում ամբողջ աշխարհում կանխել է Android-ի համար վնասաբեր, գովազդային կամ անցանկալի մոբայլ ծրագրերի օգտագործմամբ 7 697 975 գրոհ այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կանխվել է 5 704 599 նման գրոհ:



«Կասպերսկի» ընկերության փորձագետները տեղեկացնում են, որ, չնայած ընթացիկ տարվա ապրիլ-հունիսին այդ գրոհների թվի աճին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանց քանակը ընթացիկ տարվա առաջին եռամսյակի (10 100 510) համեմատ նվազել է: Այդ մոբայլ վնասաբեր ծրագրերի ակտիվության գագաթնակետը գրանցվել է 2023-ի չորրորդ եռամսյակում, երբ հետ է մղվել 10 705 625 գրոհ: Նվազումը պայմանավորված է գովազդային հավելվածների, առաջին հերթին՝ AdWare.AndroidOS.HiddenAd ընտանիքի՝ գովազդներ բացող բազմազան թաքնված ԾԱ-ի ակտիվության կտրուկ անկմամբ:

Ընկերության տվյալներով՝ ընթացիկ տարվա ապրիլ-հունիսին մոբայլ սարքերի համար ամենատարածված սպառնալիքը դարձել են RiskTool դասի ծրագրերը (պոտենցիալ անցանկալի ԾԱ)՝ հայտնաբերված սպառնալիքների ընդհանուր թվի 41%-ը: Հայտնաբերվել է ավելի քան 367 418 տեղադրման վնասաբեր փաթեթ, որոնցից 13 013 փաթեթը եղել են մոբայլ բանկային տրոյացիներ, իսկ 1 392 փաթեթը՝ մոբայլ շորթող տրոյացիներ: Իսկ 2023-ի նույն ամիսներին RiskTool-ի մասնաբաժինը կազմել է հայտնաբերված բոլոր սպառնալիքների 30,8%-ը, հայտնաբերվել է 370 327 տեղադրման վնասաբեր փաթեթ, որոնցից 59 167-ը եղել են մոբայլ բանկային տրոյացիներ, 1 318 փաթեթը՝ մոբայլ շորթող տրոյացիներ:

Ընդ որում՝ բանկային տրոյացիների նոր ունիկալ տեղադրման փաթեթների քանակը շարունակում է գրեթե նույն մակարդակի վրա լինել արդեն երրորդ եռամսյակն անընդմեջ եւ ապրիլ-հունիսին կազմել է 13 013:

Շորթիչների տեղադրման փաթեթների թիվը նվազել է 2024-ի առաջին եռամսյակի համեմատ (1 990), իսկ երկրորդում եղել է մոտավորապես նույն մակարդակի վրա (1 392), ինչ մեկ տարի առաջ (1 318): Դրանք ամենաշատն են եղել նույնպես 2023-ի չորրորդ եռամսյակում՝ 6 125 փաթեթ:

«Կասպերսկի» ընկերության հայաստանյան ներկայացուցչություն

ԻՐԱՎԵԿ

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄՈՒՐԱՑԻԿ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե 2023 թվականի տարեվերջին ՀՀ մարզերում եւ մայրաքաղաք Երեւանում քանի՞ մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահաս է եղել:

Երեւանում 2023 թվականին եղել է 2 մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահաս, որոնցից մեկը աղջիկ է: Անչափահասներից մեկը մինչեւ 14 տարեկան է, իսկ մյուսը՝16-18 տարեկան:

Շիրակի մարզում 2023 թվականին նույնպես 2 թափառաշրջիկ եւ մուրացիկ անչափահասներ են եղել, որոնցից 1-ը կրկին աղջիկ է:

Անչափահասներից մեկը մինչեւ 14 տարեկան է, իսկ մյուսը՝14-15 տարեկան:

Տավուշի մարզում 2023 թվականին եղել է 1 թափառաշրջիկ եւ մուրացիկ անչափահաս՝14-15 տարեկան:

Ընդհանուր առմամբ՝ ամբողջ ՀՀ-ում, ըստ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների, 2023 թվականին եղել է 5 թափառաշրջիկ եւ մուրացիկ անչափահաս:

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերում թափառաշրջիկ եւ մուրացիկ անչափահասներ չկան:

Իհարկե այն փաստը, որ կան թափառաշրջիկ եւ մուրացիկ անչափահասներ շատ տխուր է, սակայն ցուցանիշը փոքրինչ փրկում է այն հանգամանքը, որ նրանք ընդամենը 5-ն են:

Ուսումնասիրելով ինֆոգրաֆիկան՝ կարելի է նկատել, որ 2002 թվականից մինչեւ 2023 թվականը թափառաշրջիկ եւ մուրացիկ անչափահասների թիվը նվազել է՝ 111-ից դառնալով 5, սակայն ամենաքիչ թվաքանակը եղել է 2017 թվականին:

2017 թվականին մուրացիկ եւ թափառաշրջիկ անչափահասների թիվը եղել է երկու:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԵՐ

Ներքին Հանդը Հայաստանի Կապան համայնքի գյուղ է, որը 3 կողմից շրջափակված է ադրբեջանական 2 տասնյակից ավելի զինված դիրքերով, միայն այստեղ Հայաստանի տարածքից օկուպացված է 2,700 հեկտար:

Մենք ապացույցներով արձանագրել ենք Ներքին Հանդի բնակիչների նկատմամբ ադրբեջանական հանցանքների լրացուցիչ փաստեր՝Հայաստանի «Շիկահող» պետական արգելոցում հազարավոր ծառահատումներ ու տասնյակ կիլոմետրերով կառուցվող ռազմական ճանապարհներ, տեղադրված բազմաթիվ ականներ (ադրբեջանական 2 դիրքի օրինակով), խմելու ջրից բնակիչներին զրկելու դեպքեր, զինված դիրքեր քաղաքացիական տների անմիջական հարեւանությամբ եւ այլն:

Ադրբեջանն անցակցնում է շրջակա միջավայրին վերաբերող COP29 միջոցառումը, մինչդեռ հենց ինքն ավերում է Հայաստանի շրջակա միջավայրը. այս փաստերը պետք է հնարավորինս ներկայացվեն աշխարհի հարթակներում՝ ցույց տալու ադրբեջանական իրական մտադրությունները:

ԱՊՕՐԻՆԻ ՏԵՂԱԴՐՎԱԾ 103 ԽԵՑԳԵՏՆՈՐՍԻՉ

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզային վարչության Սեւանի տեղամասի աշխատակիցների կողմից ձեռնարկած հերթական կանխարգելիչ-ստուգիչ միջոցառումների արդյունքում սույն թվականի հոկտեմբերի 8-ին Գեղարքունիքի մարզի Սեւան բնակավայրին հարող լճափնյա տարածքներից դուրս է բերվել ապօրինի տեղադրված 103 հատ խեցգետնաորսիչ:

Փաստի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն, խեցգետինները բաց են թողնվել լիճ:

Իրականացվող կանխարգելիչ-ստուգիչ միջոցառումները կրում են շարունակական բնույթ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 14 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Էրեբունի, Մուրացանի փողոց, 113/1 շենք, 48 հասցեում գտնվող 46,5 քմմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26460000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 28.10.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 28.11.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԸ՝ WCIT 2024/DigiTec-ՈՒՄ

ԹՎԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Հայաստանը երկրորդ անգամ հյուրընկալեց նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսին՝ WCIT 2024/DigiTec-ին: «Ֆասթ» բանկը WCIT 2024/DigiTec-ի բանկային գործընկերն էր եւ DigiTec-ի ֆինտեխ հովանավորը: Տարածաշրջանի տեխնո իրադարձության մեկնարկն ազդարարվեց «Ֆասթ» բանկի եւ Fastex-ի կողմից յուրահատուկ նվերով երեւանցիներին եւ մայրաքաղաքի հյուրերին. «Ֆասթ» բանկի եւ «Ֆասթեխի» հատուկ հրավերով Հայաստան էր ժամանել համաշխարհային աստղ Ջեյսոն Դերուլոն: Հանրաքեռության հրաքարակում բացառիկ համերգային ծրագրով ելույթ ունեցավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ առցանց ռեժիմում արհեստական բանականության կողմից ինտեգրված երաժշտությամբ: Երեկոյի երկրորդ հատվածում շքեղ երաժշտական շոուով հանդես եկավ Ջեյսոն Դերուլոն:

«Ֆասթ» բանկը ներկայացավ այցելուներին առանձին տաղավարներով ինչպես մարզահամերգային համալիրում ընթացող WCIT 2024/DigiTec համաժողովին, այնպես էլ «Մերիդիան» էքսպոկենտրոնում՝ Դիջիթեք ցուցահանդեսին: Չորս օր շարունակ բանկն այցելուներին ներկայացրեց իր թվային նորարարական պրոդուկտները՝ հոկտեմբերի 1-ից թողարկված նոր ԱԿՆ քարտերը, Temp անգրավ բիզնես վարկը, տարածաշրջանում եզակի, ամբողջությամբ ավտոմատացված պահատուփերի ծառայությունները եւ այլն: «Ֆասթ» բանկի գործադիր տնօրեն Գարեգին Դարբինյանի խոսքով՝ այս տարի միջոցառումն ավելի մասշտաբային էր. ««Ֆասթ» բանկը 2-րդ տարին է արդեն մասնակցում է Դիջիթեք տեխնոլոգիական էքսպոյին եւ այս տարի այն ավելի մասշտաբային է, քանի որ զուգորդվել է WCIT համաժողովի հետ: Այս տարվա մասնակցությունը մեզ համար կարեւոր է նրանով, որ «Ֆասթ» բրենդը տոնել է իր 30-ամյակը, ինչպես նաեւ մենք այս տարվա հոկտեմբերի 1-ից թողարկել ենք եւ գործարկել ենք մեր առաջին քարտային պրոդուկտները», - նշել է Գարեգին Դարբինյանը:

Բանկի տաղավարները ցուցահանդեսի բոլոր օրերին մարդաշատ էին՝ լի հետաքրքրաշարժ քուիզներով եւ անակնկալներով: Նշենք, որ «Ֆասթ» բանկը ստեղծել է հայերեն խոսքը տեքստի վերածող (Speech to text) մոդելը: Ցուցահանդեսի այցելուները հնարավորություն ունեցան տեղում փորձարկելու մոդելը եւ տեսնելու դրա հնարավորությունները: «Ֆասթ» բանկի թվային բանկինգի տնօրեն Արթուր Հարությունյանը նշեց, որ այս հարթակը շատ կարեւոր է ընկերության նվաճումներն ու նորարարությունները ներկայացնելու համար. «Այս կարեւոր հարթակը հնարավորություն ընձեռեց մեզ ներկայացնել մեր թվային նվաճումները: «Ֆասթ» բանկը միտված է դառնալ թվային բանկ եւ այդ կոնտեքստում մենք ներկայացրինք նոր թողարկված հայերեն խոսքը տեքստի վերածող մոդելը, որը ձեւավորվել է «Ֆասթ» բանկի կողմից ստեղծված «Խոսափող» հավելվածի տվյալների հիման վրա», - եզրափակեց Արթուր Հարությունյանը:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Web3 ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ «ԴԻՋԻԹԵՔ»-ԻՆ

Տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական իրադարձության՝ DigiTec Expo 2024-ի շրջանակում Fastex-ը ներկայացրել է իր վերջին նորարարական լուծումները՝ հանդիսանալով միջոցառման գլխավոր գործընկեր: Meridian Expo Center-ում հոկտեմբերի 4-6-ը աշխարհի տարբեր անկյուններից Հայաստան էին ժամանել շուրջ 30,000 այցելու, ավելի քան 15 լրատվական, 200 մասնակից՝ներկայացնելու իրենց նորարարական լուծումները:

DigiTec Expo 2024-ին ներկայացված էին էկոհամակարգի Web3 պրոդուկտները, ներառյալ՝ Fastex Exchange կրիպտոփոխանակման հարթակը, Fastex Wallet-ը, Fastex Card-ը, AKNEYE, ftNFT հարթակը, YoCerebrum մետավերս տիրույթը եւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը:

DigiTec Expo 2024-ի շրջանակում անցկացվող պանելային քննարկումներին մասնակցել են հայաստանյան տեխնոլոգիական ոլորտի առաջատարներ՝ կիսվելով իրենց գիտելիքներով եւ փորձով:

Fastex-ի իրավաբանական գծով տնօրեն եւ տնօրենների խորհրդի անդամ Վարդան Խաչատրյանը պանելային քննարկմանը ներկայացել է «Նորարարությունը՝ պաշտպանված օրենսդրությամբ. թերի օրենսդրության կարգավորումների ռիսկերը Հայաստանում» թեմայով: Պանելային քննարկումը վարել է Firo-ի գլխավոր կրիպտոգրաֆեր Արամ Ջիվանյանը: Կրիպտո ոլորտում օրենսդրական կարգավորումների վերաբերյալ հետաքրքիր եւ արդյունավետ քննարկմանը մասնակցել են Blockstars-ի համահիմնադիր Արտյոմ Հարությունյանը, Bitcoin Armenia-ի գործադիր տնօրեն Էդուարդ Ավետիսյանը եւ Layerswap-ի գործադիր տնօրեն Արամ Քոչարյանը:

Քննարկումների շրջանակում անդրադարձ է կատարվել «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի նախագծին եւ կրիպտոակտիվների ոլորտի վրա դրա ազդեցությանը:

Վարդան Խաչատրյանը նշել է. «Հասկանալ եւ ընդունել օրենսդրական կարգավորումները՝ նշանակում է լինել մեկ քայլ առաջ: Հայաստանում կրիպտոակտիվների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն ունեն բացեր, այնուամենայնիվ, կան հստակ կետեր, որոնք թույլ են տալիս իրավական դաշտում ծավալել գործունեություն: Այս գործընթացն օրեցօր մեծ թափ է հավաքում»:

Fastex-ի համար այս ձեւաչափը տեխնոլոգիական աշխարհի ներկայացուցիչների, փորձագետների եւ ոլորտով հետաքրքրվողների հետ քննարկումների, նոր ծանոթություններ ձեռք բերելու եւ գործունեություն համար բարենպաստ Web3 հարթակներ գտնելու հնարավորություն էր:

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՈՎ ԵՆ ԿԵՍ ՄԼՆ ԴՐԱՄ ԽՈՍՏԱՑԵԼ

X-Group ընկերության մարքեթինգի ղեկավար Սեդա Հովսեփյանը «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է, որ ընկերությունը խոստանում է կես միլիոն դրամ պարգեւավճար այն քաղաքացուն, որը կտրամադրի կադրեր հրդեհի բռնկման սկզբնական ժամանակահատվածից:

«Հարգելի՛ քաղաքացիներ, բոլորդ տեղյակ եք եւ վստահ ենք, սրտագին ցավում եք Իսակովի պողոտայում «Ռոմուս» խանութ-սրահում բռնկված հրդեհից:

Անշարժ գույքի սեփականատերը, ցանկանում է տեղեկանալ հրդեհի ակունքի եւ դրա իրական պատճառների մասին, ինչը կարող է աջակցել նաեւ քննությունն իրականացնող իրավապահ մարմիններին, ուստի հայցում է ձեր օգնությունը եւ խոստանում 0,5 միլիոն դրամի չափով պարգեւավճար այն քաղաքացուն, ով կուղարկի տեսահոլովակ, որտեղ երեւում են հրդեհի նախնական կադրերն ու պատճառները:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵՋԱԿԻ ՆՄՈՒՇ՝ ԹԱՆԳԱՐԱՆԻՑ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԳՈՐԳԻ ՇՈՇԱՓԵԼԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ

«Խոսող կտավներ» ներառական նախագծի շրջանակում տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար ստեղծվել է «Սասունցի Դավիթ» գորգի շոշափելի կրկնօրինակը՝ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի հավաքածուից:

1874 թ.-ին Պոլսում գրավոր առաջին անգամ հրատարակվել է «Սասունցի Դավիթ»-ը՝ հայ մեծագույն էպոսը, որը դարեր շարունակ գոյատեւել է ժողովրդի հիշողության մեջ: Շոշափելի կրկնօրինակը ստեղծվել է ի հիշատակ «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին հրատարակության 150-ամյակի, Ավետիք Իսահակյանի «Սասմա Մեր» պոեմի 105-ամյակի: Այս եզակի գորգը ստեղծվել է 1939 թ.-ին՝ էպոսի 1000-ամյակի առիթով: Մեկ տարի անց Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը նվիրում է այն Ավետիք Իսահակյանին՝ բանաստեղծի 65-ամյակի կապակցությամբ: Հայ դյուցազներգությունն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Իսահակյանի ստեղծագործությունում, Վարպետը մշակել է էպոսի չորրորդ ճյուղը՝ «Փոքր Մհերը»:

«Խոսող կտավներ» ներառական նախագծի շրջանակում ստեղծված շոշափելի կրկնօրինակը պատրաստվում է հիպոալերգեն պլաստիկից: Պատկերը կկարողանան «տեսնել» կույր եւ տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ:

Շոշափելի գորգն ապահովված է տիֆլոմեկնաբանությունով (տիֆլոմեկնաբան՝ Արման Նավասարդյան):

Բրայլի այբուբենով ներկայացված տեղեկատվությամբ, QR-կոդով՝ YouTube-յան ալիքում տեղադրված տիֆլոմեկնաբանության հղումով: Տիֆլոմեկնաբանությունները ձեւավորվում են համապատասխան երաժշտությամբ: Նախագծի ձայնային ինժեները, ռեժիսորը եւ գլխավոր փորձագետը Վահան Նահապետյանն է:

«Բոլորովին վերջերս նախագծի շրջանակում հանրությանը ներկայացրինք Երվանդ Քոչարի ձեւավորած «Սասունցի Դավիթ» էպոսի 7 պատկերազարդման շոշափելի կրկնօրինակները: Հաշվի առնելով հոբելյանական կարեւոր իրադարձությունները՝ որոշեցինք անմասն չթողնել նաեւ «Սասունցի Դավիթ» գորգի շոշափելի կրկնօրինակի ստեղծման գաղափարը եւ իրականացրինք այս նախագիծը: Շոշափելի կրկնօրինակն իր ուրույն տեղը կգտնի Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում»,- նշում է նախագծի հեղինակ եւ պրոդյուսեր, «Սարեր» մշակութային ՀԿ-ի նախագահ Էռնա Ռեւազովան: «Շատերը չգիտեն, բայց երբ շատ ես ձեռք տալիս շոշափելի կտավների, զարգանում է շոշափելիքի զգայարանը: Փաստորեն՝ ոչ միայն տեղեկանում ես, այլեւ մեկ այլ կարեւոր օգուտ ես ունենում՝ շոշափելիքի զարգացումը: Ընդլայնվում է մատների տեսողությունը, զարգանում: Այստեղ այնքան հետաքրքիր է ամեն ինչ սարքած, որ շոշափելիս ինֆորմացվում ես ձայնային ուղեցույցով՝ տիֆլոմեկնաբանությամբ, բայց նաեւ քեզ մոտ զարգանում է շոշափելիքը: Դպրոցում սովորելուս տարիներին թղթերի վրա կետերով գծեր էին անում, որ շոշափենք. քառակուսիներ էին նկարում, եռանկյունիներ, որ շոշափելիքը զարգանա: Եվ սա շատ ավելի պրոֆեսիոնալ տարբերակ է ոչ միայն ինֆորմացվելու, այլեւ շոշափելիքը զարգացնելու: Սա ձեռքերի տեսողության ընդլայնմանն ուղղված քայլ է»,- նշում է Վահան Նահապետյանը, ով հանդիսանում է ներառական նախագծի թիրախային խմբի ներկայացուցիչ:

Ծրագրի գործընկերն է Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՎՐԱՑԻ ԳՐՈՂԸ ՍԻՄՈՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ ԳԻՐՔ Է ՀԵՂԻՆԱԿԵԼ

Վրացի գրող Իվա Փեզուաշվիլին Հայաստանում էր՝ ներկայացնելու իր «Բունկեր» վեպի հայերեն թարգմանությունը: «Բունկեր» վեպը սագա է Սիմոնյան ընտանիքի մասին, որն Արցախյան պատերազմի ժամանակ փախչում է Թբիլիսի՝ կոռուպցիայի, բռնության եւ կեղտոտ քաղաքականության քաղաք: 24 ժամվա ընթացքում զարգացող պատմությունը կոնֆլիկտների, դրամաների ու մարտահրավերների մի կծիկ է, որի մեջ միանգամից հայտնվում է ամբողջ ընտանիքը:

Թարգմանությունը վրացերենից իրականացրել է Անի Աստատուրյանը, խմբագիրն է Արքմենիկ Նիկողոսյանը: Գիրքը լույս է ընծայել «Անտարես» հրատարակչությունը:

Գրքի շնորհանդես-քննարկմանը ներկա էր ՀՀ-ում Վրաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն:

«Սա հրաշալի հնարավորություն է երկու հարեւան ժողովուրդների՝ հատկապես երիտասարդության մտածողությունը ճանաչելու հարաբերվելու ու համեմատվելու տեսանկյունից: Վստահ եմ, որ եթե ոչ հիմա, ապա հետագայում այս վեպը շատ մեծ հետաքրքրության կարժանանա: Ուզում եմ առանձնահատուկ շնորհակալություն հայտնել Անիին, ով կարողացավ հաղթահարել ոճի առումով բարդ լեզուն, եւ ահա ունենք այս հրաշալի արդյունքը: Հուսով եմ, որ ոչ միայն միասին կրկին կաշխատենք, այլեւ հայ գրողների գործերը նույնպես նման ձեւով վրացերեն լույս կտեսնեն Վրաստանում»,- նշեց Արքմենիկ Նիկողոսյանը:

Վրացի գրող Իվա Փեզուաշվիլին էլ ընդգծեց, որ շատ պատասխանատու կերպով է մոտեցել հատկապես պատմական իրադարձություններին: Նա խոսեց գրքի ստեղծման մասին, ինչպես նաեւ հատուկ ընդգծեց՝ ուրախ է լինել Հայաստանում: Հավելեց նաեւ, որ մեծացել է վրացական բակում, որտեղ խաղացել է հայերի հետ եւ երբեք չի զգացել ազգային տարբերությունները: Հայերի հետ էլ մշտապես մեծ սիրով է շփվել ու համագործակցել:

ԱՆՎԱՆԱՏԱԽՏԱԿԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱԲՈՂՈՒԹՅՈՒՆ

Սպենդիարյան 5 հասցեում տեղի ունեցավ հայ դիրիժոր, Հայաստանի պետական կամերային նվագախմբի նախկին գեղարվեստական ղեկավար, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Արամ Ղարաբեկյանի անվանատախտակի բացման արարողությունը: Անվանատախտակ զետեղելու նախաձեռնությունը Ղարաբեկյանի ընտանիքինն է: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին Ղարաբեկյանի ընտանիքի անդամները, ընկերները, հարազատներն ու պարզապես արվեստասերներ;

Ղարաբեկյանն արդեն 10 տարի մեզ հետ չէ: Իր կյանքի 58 տարիների ընթացքում նա հասցրեց ապրել եւ արարել աշխարհի տարբեր կողմերում, սակայն իր տունը միշտ համարում էր Երեւանը, իսկ ամենանվիրական աշխատանքը՝ Հայաստանի պետական կամերային նվագախմբի ղեկավարումը: Հաշվի առնելով մաեստրոյի սերը՝ ընտանիքը որոշեց հավերժացնել մաեստրոյի հիշատակը նաեւ այն շենքում, որտեղ ապրել է Ղարաբեկյանը:

Ղարաբեկյանի քույրը՝ Քրիստին Ավագյանը, իր խոսքում շնորհակալություն հայտնեց ճարտարապետ Կարեն Ավանեսյանին՝ անվանատախտակն իրականություն դարձնելու համար: Նրա խոսքով՝ նման մտահղացում ընտանիքն ունեցել է դեռ 10 տարի առաջ, եւ ինքը շատ գոհ է արդյունքից, որովհետեւ անվանատախտակը դիրիժորին շատ բնորոշ է ստացվել:

Հայ խմբավար, մանկավարժ եւ Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր Տիգրան Հեքեքյանը Արամ Ղարաբեկյանի ընկերներից էր:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀԱՂԹԱՀԱՐԵԼ Է 2400 ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՇԵՄԸ

Էրիկ Հակոբյանը «Ծաղկաձոր օփեն 2024» շախմատի միջազգային մրցաշարի շրջանակներում հաղթահարել է 2400 վարկանիշային շեմը եւ քանի որ արդեն ունի անհրաժեշտ նորմաները, կստանա միջազգային վարպետի կոչում: Այս մասին հայտնում է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Ծաղկաձորում Էրիկը 9 հնարավորից վաստակել է 6.5 միավոր՝ կիսելով 2-3-րդ հորիզոնականները ռուս գրոսմայստեր Իգոր Լիսիի հետ:

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ 9–0 ՀԱՇՎՈՎ ՀԱՂԹԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՄՐՑԱԿՑԻՆ

Հայաստանը ներկայացնող Ջորիկ Հովհաննիսյանը դարձել է Աստանայում ընթացող գրեփլինգի աշխարհի առաջնության մինչեւ 15 տարեկաններ-ի չեմպիոն:

Արմավիրցի մարզիկը 29-32 կգ քաշային կարգում երկու հաղթանակ տանելուց հետո դուրս է եկել եզրափակիչ, որտեղ ժամանակից շուտ 9-0 հաշվով պարտության է մատնել ադրբեջանցի մրցակցին:

15 տարեկանների պայքարում 35 կգ քաշային կարգում արծաթե մեդալակիր է դարձել Մարատ Կարապետյանը:

ՖԻՖԱ–Ի ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՍՔԸ՝ ԻՆԻԵՍՏԱՅԻՆ

ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոն խոսել է 40-ամյա կիսապաշտպան Անդրես Ինիեստայի մասին, ով ավելի վաղ հայտարարել էր կարիերան ավարտելու մասին:

«Մենք շնորհավորում ենք Անդրես Ինիեստային այսպիսի փայլուն կարիերա անցկացնելու կապակցությամբ: Աշխարհի առաջնության հաղթական գոլից, որն օգնեց Իսպանիայի հավաքականին առաջին անգամ նվաճել բաղձալի գավաթը, մինչեւ հաղթանակ՝ երեք ակումբային աշխարհի առաջնություններում: Դուք հիացրել եք ողջ աշխարհի երկրպագուներին:

Շնորհակալություն բոլոր հիշողությունների համար: Հաճելի էր գնդակը տեսնել ձեր ոտքերի առաջ: Ձեր ստեղծած կախարդանքը միշտ կմնա մեր սրտերում: Ցանկանում եմ ձեզ ամենալավն ապագայում», - գրել է Ինֆանտինոն իր սոցիալական ցանցի էջում:

Իսպանիայի ազգային հավաքականի կազմում Ինիեստան անցկացրել է 131 հանդիպում, որոնցում խփել է 14 գոլ եւ կատարել 30 գոլային փոխանցում: Կիսապաշտպանը երկու անգամ հաղթել է Եվրոպայի առաջնությունը եւ դարձել աշխարհի չեմպիոն:

● *Հոկտեմբերի 14-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կուլիսներում, կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչ է միանվագ վճարը: Ինչի՞ հիման վրա է վճարվում այն:

Համլետ Մեսրոպյան (66 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Մեսրոպանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ միանվագ վճարը կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջապես մասնակցին միանգամից վճարելն է:

Եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակիցն իրավունք ունի կուտակած միջոցները ստանալ միանվագ վճարների ձեւով: Բացի դրանից, եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակիցը պարտավոր է կնքել հիմնական կենսաթոշակի հնգապատիկն ապահովող անուիտետի պայմանագիր, իսկ մնացած մասը նա իրավունք ունի ստանալ միանվագ վճարի տեսքով:

Բացի վերը նշվածը՝ կենսաթոշակային հաշվում առկա միջոցները միանվագ վճարի ձեւով վճարվում են նաեւ՝

1. մասնակցի՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում,
2. մասնակցի՝ ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու եւ կենսական կարեւոր օրգանների անբուժելի ախտահարումով հիվանդ լինելու դեպքում:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նպաստը նշանակելու եւ վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը գրանցվում է հաջորդ ամսվա վճարման ցուցակներում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե հասարակական կազմակերպությունը ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, ապա արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանո՞ւմ է:

Սուսաննա Վարդանյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

Այսինքն՝ հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով նրանց տրամադրել հաշվարկված եւ վճարված եկամուտների, պահված հարկի գումարների վճարումների մասին տեղեկանքներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մատենադարանում կբացվի ձեռագրերի կենսաքիմիական հետազոտության լաբորատորիա: Այն կբացվի «Հիշողության կերպարանքները» 13-րդ միջազգային ամենամյա գիտագործնական սեմինարի շրջանակում:

«Հիշողության կերպարանքները» միջազգային սեմինարն իր շուրջն է համախմբում գրավոր ժառանգության պահպանման առաքելություն ունեցող աշխարհի կարեւոր հաստատություններին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +15 + 20
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +14 + 19
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +17 + 20
Գեղարքունիք	+ 4 + 8 +14 + 17
Լոռի	+ 6 + 10 +16 + 19
Տավուշ	+ 8 + 13 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +18 + 20

Արարատ	+ 13 + 15 +19 + 22
Արմավիր	+ 12 + 14 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +15 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +16 + 18
ԼՂՀ	+ 8 + 10 +15 + 18
Երեւան	+11 + 14 + 15 + 19

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*